

ՆԱՄԱԿՆԵՐ ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ա.

Տեսութիւն «Ես»-ի մասին <sup>1)</sup>

Սիրելի Սուրէն,

Նամակդ ստացայ. թէև արդէն վաղուց է որ թողել եմ ուսուցչական ասպարէզը, սակայն մեր դպրոցների վերաբայումն ինձ զուարթեցրել է, իսկ քո նամակը վերաարտագրեց իմ մէջ հին յիշողութիւններ. հին մտապատկերները շարան շարան գալիս են իմ նախանձը շարժելու և որքան ցաւում եմ, որ չեմ կարող դարձեալ դպրոցական վարժապետ լինել, ապրել անմեղ հոգիների շրջանում, աշակերտ—աշակերտուհիներիս հետ: Դու գրում ես, որ քո կեանքի նպատակը առևտրական կամ ծառայող լինելը չէր, որ դու ձգտում չես ունեցել հարստանալ և վարժամտաբել, այլ քեզ նուիրել ես մանուկ սերնդի դաստիարակման գործին և այն՝ գիւղում: Անչափ ուրախ եմ և իմ կողմից գոյում եմ կատարածդ քայլը:

Դու չգիտես, թէ որքան ես վշտանում եմ, երբ մեր ուսուցիչներն այժմ խուսափում են գիւղերից և մեծ քաղաքների հանդիստ կեանքն են գերադասում... Բայց այս մասին մի ուրիշ անդամ:

Սիրելիս, քեզ շատ վարդագոյն է երևում ուսուցչական ասպարէզը: Անշուշտ դա անարատ և ազնիւ երևակայութեանդ պտուղն է. ուսուցչական ասպարէզը, մանաւանդ գիւղական, որին նուիրել ես քեզ, շատ փշտ և ծանր է: Ծանր է նախ այն պատճառով, որ մեծ քաղաքներում ապրելուց յետոյ գիւղական կեանքը քեզ շատ տաղտուկ և միռաժ պիտի թուայ: Երկրորդ՝ շատ նոր գաղափարներ, որոնցով ողևորուած պիտի ճառես գիւղացուն, պիտի հան-

1) Մանուկ. Սոյն տեսութիւնը գրելիս աչքի առաջ ենք ունեցել Ա. Իլևի, Բ. Կարնեբի, Գիւլօի, Հեօֆզենգի և այլոց գրումները:

գիպի նրա սառը հեզնոց փիլիսոփայութեան, Երրորդ՝ գպրոցում՝ սաներիդ շրջանումն էլ մէկէն ի մէկ մխիթարութիւն չես գտնիլ, կամ՝ քո լեզուն չեն հասկանալ, կամ՝ քո խրատները անուշադիր կմնան, և ին. և ին.։ Քեզ այս բոլորը կարող են յուսահատեցնել և դեռ տարին չբուրած դու կտեսնես, որ վարդագոյն յոյսերդ երազ է եղել, իրականութիւնը շատ պրոզայիկ է։ Բայց եթէ դու կարողացար այս փորձութեանը գիմանալ, եթէ բնաւորութեան ասկունութիւն ունեցար և տարար բոլոր անհաճոյութիւնները, այն ժամանակ միայն մասամբ մխիթարութիւն կգանես, սրովհետեւ կունենաս քեզ հասկացողներ և համակրողներ, մանաւանդ պատանիներ ի և երիտասարդներ ի շրջանում։

Ես չեմ սիրել ճշմարտութիւնը թագցնել, կեղծել, այժմ էլ չեմ կամենում, որ դու ժողորութեան մէջ ընկնես. չպէտք է վախենալ ճշմարտութեան երեսին ուղիղ նայելուց։ Գիտենալով թէ ինչ ծանր բեռ ես շալակել, ըստ այնմ էլ ուժ պիտի ժողովես։ Քաջ նաւապետը այն ժամանակ իր նաւը անփորձ նաւահանգիստը կը հասցնի, երբ ուսումնասիրել է ծովի խութերն ու խոչերը, երբ գիտէ թէ քամին ո՞ր տեղից է վիչելու։ Բաւական չէ միայն ազնիւ գաղափարները, այլ պէտք է և ծանօթութիւն այն միջավայրի, ուր գնացել ես գործելու։ Իդէալը այն ուղեցոյց աստղն է, որին շարունակ յաւած քո հայեացքը պիտի առաջ գնաս, սակայն եթէ դու չիմանաս թէ ստբիդ տակ գետինը ինչ դրութիւն ունի, հեշտութեամբ կարող ես ընկնել, սայթաքել, սադ ու գլուխդ ջարդել, ձանաչել միջավայրը, և այդ միջավայրի անհարթութիւնները հաւասարելով գաղափարներն այնտեղ նոյնացնելը-տարածելը (ассимиляция) ահա ամեն մի գործչի նշանաբանը, մանաւանդ ուսուցչի։

Դու, սիրելիս, երբէք չպիտի մոռանաս, որ դպրոցում մի յայտնի առարկայ դասաւանդելով բարեխղճաբար, դեռ չի նշանակում թէ պարտք կատարեցիր, ոչ. այդպէս վարուելով դու կհամարուես լաւ աշխատաւոր, ազնիւ վարձ-

կան, որ ոսծիկ ստանալով՝ իրան հաւատացած առարկան աւանդում է առանց ծուլանալու և առանց խուսափելու։ Լուռ ուսուցիչը պէտք է իր սիրտը, հոգին դնի իր սաների համար և չոր ու ցամաք գիտութիւնը համեմի բարոյական դաստիարակութեամբ. առանց սրտ, առանց բարոյական դաստիարակութեան. ես դպրոցի նշանակութիւնը չեմ հասկացել և չեմ հասկանում։ Դպրոցը շատ անգամ՝ մենք համեմատում ենք արհեստանոցի հետ, ուր վարպետ ուսուցիչը իրեն յանձնուած անտաշ առարկայից—աշակերտից պատրաստում է յղկուած պիտանի առարկայ, բայց դու էլ տեսած կլինես, թէ սրբան արտաքուստ կոկուած մարդիկ են դուրս գալիս արհեստանոց—դպրոցից, որոնք ոչ մի ներքին արժանաւորութիւն չունեն. ես այդ բացատրում եմ նրանով, որ այդպիսի դպրոցներում եղել է գիտութիւն, ուսում, բայց դրանց ոգի տուող բարոյական դաստիարակութիւնը չի եղել։

Ահա, այդ բարոյական դաստիարակութեան մասին էլ ուզում եմ խօսել նամականերովս։

Ապագայ սերնդի դաստիարակութեան գործը ամենադժուարն է. ինչպէս սկսել, երբ, ինչ ճանապարհով առաջնորդուել, որ ապագայ սերունդը բաղդաւոր վիճակ ունենայ և որ վիճակը պիտի համարել բաղդաւոր և որը դժբաղդ։ Ահա հարցեր, որ մէկը միւսի յետեւից շարունակում են և որոնց մինչև օրս մի դրական պատասխան չի կարողացել տալ բարոյագիտութիւնը իր յարակից գիտութիւնների հետ միասին։ Եւ հեշտ էլ չէ մի ուղիղ ճանապարհ գծելը, որով ամենքն առաջնորդուէին, քանի որ դաստիարակութիւնը հիմնուած է այնպիսի գիտութիւնների վրայ, որնք դեռ շատ հեռու են հաստատուն հիմք ունենալուց։ Այդ պատճառով էլ այժմեան բարոյագէտները տարբեր առաջարկութիւններ են անում դաստիարակութեան համար։ Ոմանք ժխտում են անհատի մէջ անկախ զգացմունքների գոյութիւնը, ընդունում են, որ այդ զգացումները ստացական են և կախումն ունին մարդու իմացականութիւնից, ուստի առաջարկում են այդ

խմացականութիւնը — խելքը ընդլայնել, զարգացնել և գրա-  
մէջ են փնտռում՝ ապագայ սերնդի բազդաւորութիւնը։  
Կան բարոյագէտներ, սրտնք, ընդհակառակը ընդունում են  
մարդկանց մէջ ազատ անկախ հոգի, որը չի ենթարկուում  
աշխարհային ազդեցութիւններին և այդ ոգին ձգտումն  
ունի իրան հակադէմոկրատիկ շար խորհուրդները վանելու,  
չեզոքացնելու։ Կան բարոյագէտներ, որոնք այս կամ այն  
տեսակէտը ընդունելով՝ գործադրութեան միջոցների մէջ  
չեն հաշուում և այսպէս շարունակելով մեր համեմա-  
տութիւնը, կատենենք, որ իւրաքանչիւր դաստիարակ իր  
տեսակ է հասկանում դաստիարակութեան նշանակու-  
թիւնը և իր միջոցներն ու մեթոդն է առաջարկում դաս-  
տիարակչական գործում։ Իսկ սրա պատճառն այն է, որ,  
ինչպէս քիչ վերն ասացի, դաստիարակութեան համար  
պէտքէ այնպիսի գիտութիւններ ուսումնասիրել, որոնք  
իրբև գիտութիւն դեռ շատ պակասաւոր են և կարօտ  
ուսումնասիրութեան։ Այս պատճառով էլ դաստիարակը,  
եթէ իրօք նուիրուած է գործին և բարեխղճաբար կամե-  
նում է իրան յանձնուած հում նիւթից մի պիտանի իր  
պատրաստել, շուարած կանգնում է, չգիտէ ո՞ր կողմից  
մօտենայ նիւթին, որ նրան պիտանի դարձնի։ Ի հարկէ  
այսպիսի բան չէր պատահիլ, եթէ դաստիարակութիւնը  
հիմնուած լինէր մատեմատիկական գիտութիւնների նման  
ճիշտ գիտութեանց վրա, որի ֆորմուլաներն ու բացատ-  
րութիւնները ինչ լեզուով ու բառերի ինչ դասաւորու-  
թեամբ էլ ասես, միշտ միևնոյն եզրակացութեան կհաս-  
նես և եթէ հետեւանքը սխալ եղաւ, նշանակում է մտած-  
մունքդ է սխալ, գիտութիւնդ է թերի։ Բայց արի տես,  
որ մենք դաստիարակին չենք կարող ասել թէ բռնուծ գ-  
ուղղութիւնը սխալ է, որովհետև նա իր բացատրու-  
թիւնները հինումէ այնպիսի գէպքերի ու դատողութիւն-  
ների վրա, որոնց բռնել, ցոյց տալ նրանց անկանոն լինելը  
գժուար է։ Իսկ սպասել դաստիարակութեան հետեւներին,  
ճշմարիտէ, դա մեզ կարող էր համոզել նրա սխալ կամ  
ուղիղ լինելը, բայց այդպէս սպասողական գրութեամբ

դաստիարակութեան գործը շատ հեռու չէր գնալ:

Ուրեմն ինչ, կհարցնես դու, ինկատի ունենալով, որ կարողէ ամեն մի դաստիարակի ուղղութիւնը սխալ լինել, մանուկ սերնդի կրթութեան գործը բարձի թողի անէնք և թոյլ տանք որ նա իր համար ճանապարհ ընտրի:

Դժուար է մէկէն ի մէկ պատասխանելը. որովհետև ինքն ըստ ինքեան անհատը իր ամբողջ կեանքի ընթացքում ապրելով որոշ շրջանի, հասարակութեան մէջ, հեազհետէ իւրացնումէ բարոյական որոշ հայեացքներ, որ յատուկ են իւր միջավայրին, դադարեցնել այս բնական աճումը անկարելի է. բայց միւս կողմից էլ թոյլ տալ անհատին բարոյապէս աճել այն բոլոր առաւելութիւններով ու պակասութիւններով, որ ունին, ի հարկէ մեր տեսակէտով, նրան շրջապատողները, մեր խղճի հակառակ գործած կլինենք, որովհետև կան վատ հակումներ, որ դաստիարակութեան միջոցով կարելի է ազնուացնել և թոյլ շտալ, որ նա էլ փշանայ իր շրջապատողների պէս:

Որպէսզի, որքան հնարաւորէ, ճշգութեան և բուն նպատակին մօտենայ բարոյական դաստիարակութիւնը, այդ գործին նուիրուածները ուշի ուշով ականջ են կախում այն գիտութիւնների մեկնութեան, որոնք ձգտում են տարբարուծել մարդու էութիւնը, գտնել ֆիզիքականի և մտաւորի առնչութիւնը, նիւթական արարածի և նրա մէջ ապրող բանականութեան յարակցութիւնը և ապա թէ ենթադրութիւններ են անում թէ ո՞ր գազափարը, ո՞ր հայեցակէտը ինչպէս կարող է ազդել անհատի վրա և թէ ինչ ճանապարհով պիտի մօտենալ նրան:

Բարոյական դաստիարակութեան մէջ ամենաէական տեղն է բռնում անհատի Ես-ի դաստիարակութիւնը, Այդ Ես-ի կրթութիւնից կախուած է ամեն ինչ և դժբաղդաբար պիտի ասեմ, որ մեր դաստիարակներից շատերը կամ իսպառ անուշադիր են թողնում այդ, կամ մտացածին գազափարներով առաջնորդուելով ձգտում են հալածել մանկան մէջ նրա Ես-ը և տեղը դնել ընդհանուր մարդասիրութիւնը, ի հարկէ, ոչ մի կերպ հնարաւոր չէ Ես-ի

կատարեալ սպանումն, ապա և այդ ուղղութեամբ առաջ տարուող դատտիրարութիւնը ոչ թէ լաւ հետեանքի չի հասնի, այլ առաջ կրերի մարդու մէջ երկուութիւն, տատամսութիւն և աշխարհայեցողութեան պղտորումն: Պարզեւ՝ իմ միտքը:

Գու էլ շատերի նման երևի վիճաբանութեան ժամանակ պարսաւած կլինես ետականութիւնը և դովաբանած մարդասիրութիւնը, որոհետե առ հասարակ շատ բարձր ու հաստատուն պատուանդանի վրա է կանգնած այն բարոյական սկզբունքը թէ՛ պէտքէ աշխատել մարդկանց մէջ հէնց առաջին տարիներից մեռցնել նրանց Եօր և դրա փախարէն զարգացնել անձուրացութեան գաղափարը:

Ո՞վ կարող է չոգևորուել մարդասիրական գաղափարով, որն իդէալի, ազնիւ ձգտումների համար անհատին առաջարկում է անձնազոհ լինել և ո՞վ չի դատարետիլ ետականութիւնը, որն իր համար զոհ է պահանջում ուրիշներից:

Ըստ երևոյթին մարդասիրական և ետասիրական գաղափարները կամ երոսպական բաւերով եթէ ասեմ — Ալ-սրուիզմն ու էգօիզմը այնպիսի հակադիր ծայրեր են, որ իրար հետ հաշտեցնել չի կարելի եւ իրօք ապարդիւն ջանք կլինի այս երկու տարբեր գաղափարները հաշտեցնելու ձգտումը, եթէ ընդունենք, որ մարդասիրութեան և ետասիրութեան պահանջները տարբեր են: Բայց արդեօք այդպէս է. արդեօք այս երկու գաղափարները իրարից անքան տարբեր են, որ դատելու տեղ չեն թողնում, թէ մէկը բղխում է միւսից: Իմ նպատակն է, սիրելիս, ցոյց տալ, որ ետասիրութեան և մարդասիրութեան գաղափարները ոչ թէ տարբեր չեն, այլ մարդասիրութիւնը ետասիրութեան կատարելութիւնն է:

Պիտի քեզ համար պարզ լինի, որ մարդասիրութիւնը յանկարծական, ինչպէս ասում են, երկնքից իջած չէ, այլ մարդկային սեռի իրար հետ կողք կողքի ապրելու, նրանց իրար հետ ունեցած յարաբերութեան արդիւնք է. և այն ֆօրմուլան, որ մարդասիրութեան հիմքն է կազմում, այն է «դու պարսական ես», ունի գարերի, բազմաթիւ սերունդ-

ների ժամանակամիջոցում կատարուած զարգացումն և ենթարկուել է բազմատեսակ յաջորդական զարգացման — էվոլիւցիայի, մինչև ձևակերպուել է «դու պարտական ես» ֆորմուլայի ներկայ ձևը. իսկ այս ֆորմուլան, որ կեանքի մէջ համարեա թէ եռած տառ է, որ գրեթէ չի գործադրուում, այլ իբրև դարձուածք պտտում է ամենքիս բերանում, այն իդէալն է, որին ձգտում է հասնել անհատը:

«Ինչ պարսական ես» ֆորմուլան սրբան և հեշտ է արտասանուում, սակայն պարսկականութիւնները կատարելու ժամանակ առաջանում են այնպիսի սոսկալի հակասութիւններ և ընհարումներ, որ մարդկանց շուրջը ստեղծվում է մի կատարեալ քօս, որից դուրս գալ շատ բշերին է յաջողում:

Նախնական մադը մի բարոյական սկզբունք ունէր. ապրել իր համար, հնար եղած միջոցներով պահպանել իր գոյութիւնը. նրա մէջ թագաւորում էր կիրքը, որի ազդեցութեան տակ նա յարաբերութեան մէջ էր մտնում ուրիշ իր մեան արարածներին հետ և բնականաբար նրա մէջ զարգանում էր ինքնապաշտպանութեան բնագոյր, որ նրա մահով էլ վերջանում էր: Ի հարկէ, այս գոյութեան կարգը եսական բնաւորութիւն ունէր և մարդկանց գործունէութիւնը վերջ ի վերջոյ հանգչում էր այդ սկզբունքի վրա: Այդպէս էր նախնական մարդը, այդպէս է և ժամանակակից մարդը:

Ես հաւատում եմ, որ թէ դու և թէ շատերը յանգուգն պիտի համարեն այս վերջին տողերս. շատերը թերևս վրդովեն: Այս ես լաւ եմ հասկանում, որ ճշմարտութեան երեսին ուղիղ նայելը շատ էլ հեշտ ու հաճելի չէ. գիտեմ, որ մարդասէրներից շատերը, որոնք բարեգործութեան պատուանդանի վրա են կանգնած, յետ կմղուեն. բայց ինչո՞ւ պիտի վախենալ դրանից, քանի որ այդ տեսակ մարդասէրների կեանքում անհնարին է լինում նրանց յետ կացնել այն յանցանքներից, որ բարոյագէտները յաճախ և անզուսպ կերպով դատաւիտում են: Մինչև օրս դեռ չի գրուել մի բարոյագիտական ձեռնարկ, որի պատուէրները

մարդիկ կատարելով մարդասէր լինէին և ակնկալութիւն չունենային իրանց բարի արածների համար գէթ այն աշխարհում — հանդերձելումն վարձատրուելու, դէպի բարեգործութիւնը ունեցած մարքուր սիրով զօհէին իրանց բազմաւորութիւնը ուրիշի բազմաւորութեան համար, անուանց դրա մէջ ներքին բաւականութիւն զգալու:

Բայց կարելի է դաստիարակել անհատին այնպէս, որ բարի առնելը դառնայ նրա համար երկրորդ բնութիւն, և անհատի մէջ գոյութիւն ունեցող սիրոյ սաղմը աստիճանաբար զարգանալով իր սիրած առարկան համարի իւր ետը:

Մենք բարի ենք գործում, որովհետեւ նա մեզ թուում է աւելի գեղեցիկ, աւելի վսեմ, սւտի և մեզ ձգում է դէպի ինքը և մենք ուրախութեամբ ենք գործում: Եւ ուրախութեամբ գործունէութեան մէջ երեւում է եսակալութեան պէս մի բան, որ, իհարկէ, հակառակէ մեզանում ընդհանրացած բարեգործութեան գաղափարին, որովհետեւ դրանով նսեմանում է այն ծառայութիւնը, որ նա արել է, և բարեգործութիւնը, ըստ ժամանակակից շատ բարոյագէտների հասկացողութեան, առանց այս վսեմ ծառայութեան անհասկանալի է: Տիրող հասկացողութեամբ այն բարեգործութիւնն է մեծ, վսեմ, որ ձեռք է բերում մեծ զօհողութեամբ (իբր առանց ակնկալութեան) մինչդեռ, այդ զօհողութեան տակ շատ անգամ թաղնուած է լինում մնափառութիւն, և թէ աւելին չասեմ...

Ասածներս աւելի պարզելու համար դարձեալ մի հարցի պիտի պատասխանեմ, արդեօք մարդկութեան մեջ կայ լուրի հասկացողութիւնը և ինչպէս է նա հասել դրան: Մեզ համար այս հարցերի պատասխանը անհրաժեշտ է այն պատճառով, որ ես անհատի առանձնակի գոյութիւն չեմ ընդունում, այլ ընդունում եմ անհատն իր նմանների հետ միասին: Անշուշտ դու այդ հարցերին դրական պատասխան ես սպասում և ես դրական պատասխան կտամ: Այն, լուրի հասկացողութիւնը կայ, մարդն ունի բարոյական լուրի գաղափարը, թէև այդ գաղափարը զանազան ժամանակներում և մարդկութեան որոշ մասերում, նայած նրանց

պայմաներին և հասկացողութեան եղել է տարբեր, վայրենու և քաղաքակրթութեան բարոյական լաւը տարբեր չափ ու պահանջ ունի, թէև երկուսի գաղափարն էլ նոյնն է, իսկ թէ ինչպէս է հասել այդ լաւի գաղափարին, մենք պէտքէ ուսումնասիրենք մարդկութեան քաղաքակրթութեան աստիճանական զարգացումն (էվոլյուցիան) և ենթադրութիւններ անենք: Պիտի ենթադրել, որ փորձը անհատին բերել է այն համոզման, որ առաձնական կանքը ոչինչ է և չի կարող իր գոյութիւնը երկար պահպանել, որ այդ անհատական կեանքը արժէք ունի միմիայն ուրիշ իր նմանների շնորհով, հետևաբար անհատը աշխատելով տիրել և ձեռք բերածը պահել, պիտի միևնոյն ժամանակ նոյն իրաւունքները ակամայից ճանաչէր և ուրիշների համար, որքան այդ ի հարկէ համապատասխանում էր իր ուժին և շահերին: Շարժառիթը, տեսնում ես, եսական է, բայց մարդը յանձն է առնում այս զոհողութիւնը, որովհետև սրտնով ձեռք բերած շահը աւելի օգտակար է համամարում: Ամեն մի զոհողութիւն նոր նոր ապացոյց է տալիս և համոզում անհատին, որ իր անձնական շահի ձգտումն ազնուացնելով, այսինքն, անկեղծ կերպով միացնելով ուրիշ անհատների շահերի հետ, հեշտութեամբ կարող է պահել իր ինքնուրոյնութիւնը: Այսպէս էլ մի խմբի և միւս խմբի շահերի միացումն է կատարւում և ի վերջոյ ցեղերի, ազգերի, պետութիւնների և ամբողջ մարդկութեան:

Փակագծի մէջ նկատեմ, որ մարդկութիւնը շնտ շնտ հետու է վերջին շրջանի մէջ մտնելուց և բարոյական դատարակութեան վախճանական նպատակը այդ է:

Եթէ ճշմարիտ է մեր ենթադրութիւնը բարոյական լաւի գաղափարը անհատի և մարդկութեան մէջ ստեղծուելու մասին, որ նա առաջ է եկել ուղղակի անձնական օգուտի և բազդաւսրութեան համար արուած զոհողութիւններից, այն ժամանակ միանդամայն պարզ և հասկանալի պիտի լինի մեզ համար, որ մարդասիրութիւնը -- ալտրուիզմը առաջ է գալիս եսականութիւնից, այդ դեռ քիչ է, նա պահում է եսական բնասրութիւն իր ամենալաւ արտա-

յայտութիւնների մէջ և ես յոյս ունիմ իմ խորհրդածութիւններին մէջ ցոյց տալ, որ բարոյագէտ դաստիարակը ուղիղ ճանապարհի վրա կանգնած կլինի, եթէ այս փաստը բացարձակ խոստովանի և այդ ուղղութեամբ շարունակի իր դաստիարակչական գործը:

Եթէ մարդս հնարաւոր է համարում իր անհատական գոյութիւնը վտանգի ենթարկել ցանկալի նպատակներին հասնելու համար, այդ այն պատճառով, որ նա այս նպատակների մէջ է տեսնում իր ինքնապաշտպանութեան բնազդումը և նրանց հետ միացնում է իր անձնական գոյութիւնը. այսինքն, առանց այդ նպատակների ինքն իրան ոչինչ է համարում՝ ասում է Ա. Րիլ: Եւ իրօք, սրտէսով մենք ընդունակ լինենք մեր անհատական կեանքը զօհել, պէտք է աշխատենք մեր ձգտումներով, հայեցակէտերով և սիրով այնպէս ընդարձակենք մեր ես—ը, որ ընդունելով հանդերձ մեզ բարձր անհատ, դարձեալ զօհերենք, համարելով դա աւելի փոքր չարիք, քան այն, որ պիտի կորցնէինք, եթէ զօհաբերութիւն յանձն չառնէինք: Այլապէս զօհաբերութիւն չկայ և եթէ կայ էլ, այդ մեզ միայն թւում է, կամ սխալ ենք մեկնում կամ վերջապէս սահմանափակ խելքից առաջացած փառասիրութիւն է, որ ոչ գովիլու և ոչ ուշադրութիւն դարձնելու գործ է, եթէ միայն այդպիսի անձնագոհութիւնը չենք յիշում անհատին ցաւելու համար:

Այժմեան բարոյական դաստիարակութեան եղանակը սխալ է, որովհետև ճշմարտութիւնը իսկութեամբ չի ասում և ետականութիւնը ներկայացնում է այն ձևով, որ իրօք պիտի դատափետէինք, և քանի որ այդ ձևով ներկայացնելով պատերազմ ենք հրատարակում նրա դէմ, նա միշտ մնասակար կլինի մեզ համար, որովհետև մենք մեծանում ենք կեանքի մասին սխալ հասկացողութիւն ունենալով, մենք պիտի նայենք մեր Ես—ի վրա, իբրև մի չարիքի վրա, միևնոյն ժամանակ համոզուած լինենք որ, նա մեր սեպհականն է և հնար չունենք նրանից ազատուելու:

Արդ, խարէութիւն ձգելով միթէ մենք ճշմարտու-

թիւն կմարսենք, Իւրաքանչիւր անհատի համար առաջին տեղը բռնում է իր Ես-ը. այս ոչ ոք չի կարող ժխտել, եթէ չի կամենում խաբել ուրիշներին և իրեն, բայց չպէտք է մտանալ, որ կրթուածի և վայրենու եսական պահանջները միևնոյնը չեն. մարդ պէտք է այնքան իր զգացմունքերն ազնուացնի, այնքան որոշ հասկանայ ինքն իրան, որ նրա Ես-ը պարունակի իր մէջ ամբողջ մարդկութիւնը և ինչպէս Ռիլն է ասում. «այն, որի համար զոհում է իր անձը, աւելի ևս պիտի լինի իր Ես-ը, քան այն, որ զոհում է»։ Ահա այս է բնական և բացարձակ պարտաւիզմը, որ փնտրում է իր օգուտը, բայց դրա հետ միասին և ուրիշներինը, որի համար առանց ուրիշի շահերի, սեպհական շահ չկայ։

Առ հասարակ ևս կարողեմ անձս զոհել հայրենիքիս կամ սիրածս էակի համար այն ժամանակ, երբ կհամոզուեմ որ նրանց փրկելով ես աւելի բազդաւոր կլինեմ, քան նրանց կորցնելուց յետոյ, և միթէ այս սկզբունքը չի դրդել բոլոր նահատակներին իրանց կեանքը զոհ բերել ազգի, կրօնի փրկութեան, գիտական ստեղծագործութեան համար և միթէ այս անձնազոհները կուրի դաշտ դնալուց առաջ միշտ չեն կրկնում այս խօսքերը. «Ինչպիս է պէտք կեանքը, երբ ստրկութեան մէջ պիտի հեծի հայրենիքս կամ որբութիւս ստնակոխ ևզած պիտի լինի»։ Այդպէս մտածողները եթէ ինչ ինչ պատճառով չեն կարողանում իրանց անձը զոհ բերել, համարում են իրանց դժբազդ։

Եթէ մարդկանց գործունէութիւնը բացատրում է բազդաւորութիւն ձեռք բերելու ձգտումով, ապա ուրեմն սրանով էլ պիտի բացատրուի մարդկութեան առաջադիմութիւնը սկսած նրա առաջին քայլերից։ Եւ այդ դէպի բազդաւորութիւն ձգտելը ինքնապաշտպանութեան բնազդման բնական անհրաժեշտ զարգացումն է, որին ես անուանում եմ Եսականութիւն։ Ամեն մարդ, ասում է կարներ, նոյն իսկ խեղճերի խիղճը աշխատում է հասնել աւելի բաւին, քան որ ունի և սրանումն է կայանում կանքի քաղցրութիւնը և հէնց այստեղ մենք պարզ տեսնում ենք,

որ բարոյականութիւնը հակադիր չէ եսականութեան, այլ սրան լուսաւորողն:

Այն ճանապարհը, որով անհատը պիտի ընթանայ բարոյապէս բարձր անձնաւորութիւն դառնալու համար, այն ճանապարհն է, որով ընթանալով ամբողջ մարդկութիւնը հասել է բարոյականութեան հասկացողութեան: Իսկ նա երբէք չէր գնալ այդ ճանապարհով, եթէ նրան բաղաւորութիւն չպատճառէին բարոյական սկզբունքները: Իսկ բարոյական սկզբունքների վեճ լինելու համար մարդու պիտի կրթուի, դաստիարակուի: Եթէ նրա հակումները կանոնաւոր են զարգացած, նրա մէջ չի կարող մտա գործել երկուութիւնը, այլ կգործի որոշ ուղութեամբ և իր բնութեան համեմատ:

Մարդկանց մէջ չպէտք է մեռցնել ոչ մի հակում, այլ պէտք է նրան կանոնաւոր զարգացնել. մադուս բնութիւնը պիտի զարգանայ այնպէս, ինչպէս նրա ֆիզիքական կազմուածքը: Ոչոք չի մտածիլ իր մարմնի որ և է մասը ոչնչացնել, որովհետև կեանքի մէջ նրա առաջացրած շարիքը տեւում է. օր. ոչոք չի մտածիլ ոչնչացնել իր ստամոքսը, որպէսզի արբեցող կամ ագահ չլինի, այլ առողջապահական գիտելիքներով կշտիւորի ստամոքսի պահանջը: Նոյնպէս և չպիտի ձգտենք անհատի մէջ ոչնչացնել նրա Ես-ը, այլ պիտի աշխատենք ազնուացնել այն և որովհետև մարդկութիւնը բաղկացած է անհատներից, ուստի և ազնուացնելով նրանց Ես-ը, ազնուացած կլինի ամբողջ մարդկութիւնը:

Կանոնաւոր դաստիարակուած մարդը քիչ սխալներ չի անում, բայց տարբերութիւնն այն է, որ նա իր գաւաանցանքների զոհը չի դառնում, այլ ամեն կերպ աշխատում է ուղղել իր սխալը, ընդունում է իր պակասաւոր կողմերը և ցաւում, որ դեռ չի կարողացել այդ պակասութիւնները արմատախիլ անել և իւր անձը միանգամայն օգտակար կացուցանել իւր և իւրայինների համար: Նա ուրախութեամբ իր վրա է առնում իւր սխալների հետեւանքները, այսինքն իր սխալից առաջացած հետեւանքի մասին ինքն աւելի է տանջում, քան ուրիշը, այլապէս

էլ չի կարող լինել, քանի որ նա գործում է ոչ թէ անգիտակցաբար, ուրիշները օրինակին հետեւելով, այլ իր սեպհական համոզմունքներով, որովհետեւ կրթութիւնը տուել է նրան ինքնուրոյնութիւն, ազատ մտածող բանականութիւն։

Նա ընդունելով որ ինքը սխալ գործեց, այնու ամենայնիւ չի փոքրանում, չի ստորանում իր աչքում, ինչպէս և լաւ գործ կատարելիս մեծամիտ չի դառնում, այլ ճանաչելով իր Ես-ը, գնահատելով նրան, ձգտում է օգտակար կացուցանել այն իդէալին, որին ընդունում է աւելի մեծ, բարձր Ես, քան որ իր փոքրիկ Ես-ն է։ Բաւական է, եթէ նա համոզուի, որ իր լաւ գործերը գերակշռում են սխալանքներին, նա սերախութեամբ կաշխատի երեսը այնպէս, ինչպէս որ է։ Այդպիսի անհատները ամփոփում են իրանց սիրոյ մէջ ամբողջ մաքուրութիւնը և միանգամայն բողբոջում են և այդպիսիների շատութեամբ միայն մարդկային ցեղը կյառաջագիւծի, իսկ սոցա ճանապարհը լուսաւորող արիւիւն է ճշմարտութիւնը։

Մեր ժամանակներում, սիրելիս, այնքան այլանդակ ձևով է նկարագրում Եսականութիւնը, որ շատ շատերը երկիւղից ինքնախարէութեան մէջ են ընկնում և իրանց մէջ ուրանում են Ես-ի գոյութիւնը, մինչ գեռ ցանկալի է, որ Եսականութիւն դարձուածը չքարանայ իր վատ հասկացողութեան մէջ, այլ ստանայ իր իսկական նշանակութիւնը, ինչպէս ես աշխատեցի վերը բացատրել։

Վերջացնելով նամակս մի անգամ էլ կրկնում եմ, որ փոխանակ մեր մէջ ուրանալու Ես-ի գոյութիւնը, աշխատենք նրան այնքան ազնուացնել, որ իր մէջ ամփոփի ամբողջ մարդկութիւնը, որ ընդհանուրի շահը իբրև աւելի բարձր շահ քան մերը, պատրաստ լինենք զոհ բերել նրան մեր փոքրիկ Ես-ը և այս ուղղութեամբ աշխատենք կրթել, դաստիարակել մատաղ սերունդը և մենք տուած կլինենք ապագայ ընտիր հասարակութիւն։

Յգրութիւն։

Քո նախկին ուսուցիչ

20 Մարտի 1909 թ.